



ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ
№ 2(10)

ԵՐԵՎԱՆ 2022

*Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի
գիտական խորհրդի որոշմամբ*

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան, պ. գ. թ. – նախագահ

Հայկ Նազարյան, պ. գ. թ. – պատրաստման քարտուղար

Պավել Ավետիսյան, պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հարություն Մարության, պ. գ. դ.

Համլետ Պետրոսյան, պ. գ. դ., պրոֆեսոր

Հռիփսիմե Պիկիսյան, պ. գ. թ., դոցենտ

Ռուբեն Վարդանյան, պ. գ. թ.

Մխիթար Գաբրիելյան, պ. գ. թ., դոցենտ

Արսեն Բոբոխյան, պ. գ. թ.

Տորք Դալայյան, ք. գ. թ.

Համո Սուքիասյան, պ. գ. թ., դոցենտ

Արա Սանճեան, PhD (ԱՄՆ)

Ռոբերտո Դան, PhD (Իտալիա)

Հրաչ Չիլինկիրեան, PhD (Մեծ Բրիտանիա)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նայրանդյան

ՇԻՎԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ 8

Կարեն Թոխարյան

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԺԱՅՈՒՊԱՏԿԵՐՆԵՐԸ 18

Նժդեհ Երանյան, Համլիար Պեղրոսյան

ՏՈՂԻ ՍՐ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ 31

Варданесова Татьяна

КОЛЛЕКЦИЯ СРЕДНЕВЕКОВОГО СТЕКЛА
ИЗ РАСКОПОК Г. ТИГРАНАКЕРТ В АРЦАХЕ 41

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գոռ Ղազարյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ. 46

Մայա Գրիգորյան

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 58

Միրանուշ Առաքելյան

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
«СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН
КАВКАЗА» (СМОМПК 1881-1915) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԷԶԵՐՈՒՄ 68

Վանիկ Վիրաբյան

ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ.
ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 77

Մհեր Քումանյս

ՂՈՒԿԱՍ ՍԵՔԱՍՏԱՅՈՒ «ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՅՈՑ»-Ի ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեռա Բոյան

ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ
(ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ)

108

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիլիա Ավանեսյան

ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱՋԻ ՆՄՈՒՇՆԵՐ
(19-ԲԴ-20-ԲԴ ԴԱՐԻ ՄԿԻՋԲ)

118

Կարինե Բաղկյան

ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՁ

129

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուշ Մաֆայրյան

ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

138

Նարինե Շամսանյան

ՌԱԶՄԱՊԱՐԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ
(ՊԱՏՄԱՋԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ)

145

Արմինե Շահբազյան

ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ

155

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Սևդա Գալստյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

168

Համլեդր Պեղրոսյան

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈՂԻՄԱԿԱՆԸ

183

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

189

Մայա Գրիգորյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մասրենադարան
grigoryan_maya@mail.ru

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԱՅՈՒՆԻՔՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ*

Հիմնաբառեր. Սյունիք, Գորիս, Ղափան, հայ տպագրության պատմություն, տպարան, գրքեր, պարբերականներ:

Հայ տպագրության պատմությունը փաստում է, որ տպագրական որոշ օջախներ ուսումնասիրված են խորությամբ և ամբողջական, իսկ որոշ տպագրավայրերի մասին տեղեկատվությունը մասնակի է կամ տվյալ տպագրական օջախը չի հետազոտված ընդհանրապես: Սյունիքը՝ որպես 20-րդ դարի հայ տպագրության կենտրոն, դասվում է մասնակի ուսումնասիրված օջախների շարքին (Սուքիասյան 2019, 35–44: Ստեփանյան 2020, 323–339: Հախավերդյան 1996, 175–176: Իշխանյան 1981, 119: Սմբատյան 2017, 104: Зорабян 2005, с.226–227): Ընդգծենք, որ անգամ 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին տպագրված տեղական մամուլում այս օջախի մասին վկայությունները մասնակի են (Մազանդարեան 1912, 3): Արդեն առկա ուսումնասիրությունները մեզ հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել Սյունիքի տպագրության պատմության վերաբերյալ և հրաշալի աղբյուր են հետազոտական աշխատանքները շարունակելու համար:

Հայ գրատպության պատմությունն անցել է զարգացման տարբեր փուլերով, որի ընթացքում ձևավորվել են տպագրական արվեստի որոշակի սկզբունքներ: Հայ տպագրության պատմության ձևավորումը գոնե մինչև 20-րդ դարը մեծամասամբ տեղի է ունեցել պատմական Հայաստանի, առավել ևս ներկա Հայաստանի Հանրապետության տարածքի սահմաններից դուրս: Պատճառները տարաբնույթ են: Դրանցից առաջինը բուն հայկական տարածքներում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակն էր, իսկ երկրորդն այն էր, որ աշխարհի տարբեր քաղաքներում ձևավորված հայկական գաղթօջախները յուրացնում էին տվյալ երկրի ձեռքբերումները և ծառայեցնում հայ ժողովրդի և սեփական գաղթօջախի շահերին: Մեզ հասած փաստերը խոսում են այն մասին, թե ինչ կարևոր նշանակություն է ունեցել տպագրությունը հայ իրականության մեջ (Գրիգորյան 2015, 55):

Ներկայիս Հայաստանի (Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության) տարածքում առաջին տպարանը հիմնադրվել է Վաղարշապատ

* Ստացվել է 01. 07. 2022թ., ուղարկվել է գրախոսման 16. 08. 2022թ., ընդունվել է տպագրության 18. 11. 2022թ.:

տում (1771թ.): Ավելի ուշ տպարաններ են հիմնադրվել Շուշում (1827թ.), Երևանում (1875թ.), Ալեքսանդրապոլում (1876թ.): Հայ տպագրության պատմության տարբեր վերլուծություններ փաստում են, որ մինչև 20-րդ դարասկիզբը այլ տպագրության օջախներ Հայաստանի ներկայիս տարածքում չեն գործել:

Որո՞նք էին Սյունիքում հայկական տպագրության սկզբնավորմանը խոչընդոտող և նպաստող հիմնական գործոնները: Խնդիրը նրանում է, որ մինչև 20-րդ դարի սկիզբը Սյունիքը չի ունեցել մշակութային զարգացման այն մակարդակը, ինչը կար Արցախում, Շիրակում, առավել ևս Երևանում: Սյունիքի գավառի խոշոր կենտրոններն են եղել Գորիսը, Սիսիանը, Ղափանը (Կապանը), սակայն նրանցից ոչ մեկը չի ունեցել քաղաքի կարգավիճակ, բնականաբար չի ունեցել նաև քաղաքային մշակույթ: Իսկ հայ տպագրությունը փաստում է, որ հայկական տպարանները գոնե մինչև 20-րդ դարը, հիմնադրվել են մեծամասամբ քաղաքներում: Իհարկե, կան մասնակի դեպքեր, երբ տպարանը հաստատվել է գավառական մի վայրում, սակայն դրանք մասնակի դեպքեր են և տեսակարար կշիռ չունեն: Սյունիքում առաջին տպարանը հիմնադրվում է հենց Գորիսում, որը նշված վայրերից առաջինն է ստանում քաղաքի կարգավիճակ (Լալայան 1899, 26: Հախվերդյան 1996, 164: Սազանդարյան 1912, 3): 1909–1910 թթ. Գորիսում տպագրված «Գաւառ» թերթի գրեթե բոլոր համարներում արձանագրված փաստերը վկայում են, որ անգամ այն շրջանում, երբ Գորիսը քաղաք էր, այնուամենայնիվ, բնակչության մեջ քաղաքային մշակույթի մակարդակը շատ ցածր էր: Քաղաքում հոգևոր-մշակութային կյանքի ձևավորումը չունեի զարգացման արագ ընթացք և չէր ներառում հասարակության բոլոր խավերը: Հարկավոր էր ազդել մարդկանց մտածելակերպի վրա, ինչը կարող էին անել դպրոցները, գրադարան-ընթերցարանները, թատրոնը, ինչպես նաև տպարանը: Ահա ինչու 20-րդ դարի սկզբին տպարանի հիմնադրումը տեղին էր և նպատակային:

Հաջորդ պատճառը Զանգեզուրի հայ բնակչության կրթական ցածր մակարդակն էր: Ապրելով հիմնականում գյուղական պայմաններում՝ բնակչությունը մեծամասամբ զբաղված էր հողագործությամբ և անասնապահությամբ: Այս մասին նորից փաստում են «Գաւառ» և «Ղարաբաղ» պարբերականներում տպագրված հոդվածները, այդ շրջանի գործիչներն իրենց հուշերում: Իհարկե, գրեթե բոլոր գյուղերում, առավել ևս վերը նշված երեք խոշոր կենտրոններում կային բազմաթիվ դպրոցներ, բայց դրանք այնքան էլ չէին ծառայում իրենց նպատակին և չունեին հասարակության տարբեր շերտերի վրա ազդելու կոնկրետ մեխանիզմներ: Այդ պատճառով Սյունիքի գավառում փոքր թիվ էին կազմում մտավորականները, իսկ այս ոլորտում ներդրումները հասցված էին նվազագույնի: Օրինակ՝ Գ.Մելիք-Ղարաբաղյանը Ղափանի մասին թղթակցության մեջ նշում է, որ արդյունաբերության առկայությունը ինքնին ենթադրում է տվյալ հասարակության տնտեսական և առավել ևս կրթա-մշակութային ոլորտի զարգացում, սակայն Ղափանի պարագայում դրա մասին խոսելը ավելորդ է (Մել.-Ղարաբաղյան 1911, 3): Իսկ Գորիսի «Գաւառ» շաբաթաթերթի փակելու վերաբերյալ թղթակցության մեջ հոդվածագիրը փաստում է, որ թերթի փակվելը անմիջականորեն կապ ունի տեղի հասարա-

կույթյան՝ մշակութային ցածր զարգացման, անտարբերության, մտավորականության սակավաթիվության հետ (Զեվյուտ 1911, 3):

Հաջորդ խնդիրն անմիջականորեն կապ ունի ֆինանսական միջոցների հետ: Անցյալի փորձը վկայում է, որ տպագրությունը կամ տպարանի հիմնադրումը թանկարժեք իրողություն է եղել միշտ: Անհրաժեշտ էին մեծ ներդրումներ՝ համապատասխան սարքավորումներ ձեռք բերելու, տառատեսակներ ձուլելու, տարածք վարձակալելու կամ գնելու, ինչպես նաև համապատասխան մասնագետներ ունենալու համար: Սյունիքում տպագրության սկզբնավորումը կայացած է համարվում, երբ «Սասուն» տպարանի հիմնադիրները՝ Ասատուր Գևորգյանը ու Մեսրոպ Փարսյանը, Գորիսի քաղաքային խորհրդի անդամ Հայրապետ Մելիք-Օհանյանի անմիջական նյութական օժանդակությամբ Գերմանիայից տպագրական սարքավորումներ են գնում և բերում Գորիս (Զոհրաբյան, Միրզոյան 2008, 97): Բացի սարքավորումները, համապատասխան մասնագետների բացակայության կամ էլ զուտ ֆինանսական խնայողության համար, գոնե սկզբնական շրջանում, նրանք երկուսով են կատարում գրեթե բոլոր տիպի աշխատանքները: Ըստ պահպանված վկայության՝ Մեսրոպ Փարսյանը եղել է վարիչ, էջկապ, տպագրիչ, աշխատել է նաև գիշերը, որ «...առավոտյան «Ռանչպարը» խոսի մարդկանց հետ» (Զոհրաբյան 2007, 142, 156):

Սյունիքում հայկական տպագրության սկզբնավորման թվական համարվում է 1908-ը՝ հիմք ընդունելով Շուշիի «Ղարաբաղ» թերթին ուղարկված Տ.Սազանդարյանի թղթակցությունը, ուր հստակ նշված է, որ Գորիսում 1908 թվականից գործել է «Սասուն» տպարանը (Սազանդարեան 1912, 3): Տպարանից մեզ հայտնի առաջին գիրքը՝ «Կալանատորը որդեսպան» խորագրով, հրատարակվել է 1909 թ., բայց քանի որ հայ տպագրության պատմության մեջ բազմաթիվ են փաստերը, որ նորաստեղծ տպարանը հիմնադրման տարվա ընթացքում տպագրություն չի ունեցել, կարող ենք ամրագրել, որ իսկապես տպարանը հիմնադրվել է 1908 թ., իսկ առաջին գիրքը հրատարակվել՝ 1909 թ.: Ս.Հախվերդյանը (Հախվերդյան 2005, 201), Է.Զոհրաբյանն ու Հ.Միրզոյանը (Զոհրաբյան, Միրզոյան 2008, 116–117) առաջադրել են նաև հիմնադրման 1903 թ. վարկածը, սակայն այն չի կարող քննություն բռնել՝ փաստերի իսպառ բացակայության պատճառով: Ռ.Իշխանյանը հիմնադրման տարեթիվ նշել է 1909 թ.՝ առաջնորդվելով առաջին տպագիր գրքի տպագրության թվականով:

Տպարանը տեղակայված է եղել Գորիսի կենտրոնում՝ հրապարակում, որտեղ գտնվել են նաև գավառային վարչության շենքը, դատարանը, փոստը, եկեղեցիները (Զոհրաբյան 2007, 141): Գործունեություն է ծավալել երկու տասնամյակ՝ մինչև 1921 թ.: Այս տպարանում տպագրված գրքերի և պարբերականների մասին պահպանվել են տարբեր տեղեկություններ: Թեոդիկը (Թեոդիկ 1912, 185) հիշատակել է միայն Եղիա Տեր-Հայրապետյանի «Ջանգ-Է-Ջուր» գիրքը (1910 թ.) և «Գաւառ» պարբերականը (1909–1910 թթ.), Ռ.Իշխանյանը՝ միայն «Գաւառ», «Որոտան», «Սիւնիք» պարբերականները՝ հավելելով. «Այդ տպարանում լույս են տեսել նաև մի քանի գրքույկներ» (Իշխանյան 1981, 119): Ս.Հախվերդյանը նշում է միայն «Նոր քնար» գիրքը (1921 թ.) և «Գաւառ» պարբերականը: «Գորիսի հանրագիտարան»-

ում առանձնացվել է միայն «Գաւառ» թերթը, «Նոր քնար», «Արնոտ գիրքը» (1921 թ.) գրքերը: Համադրելով վերը նշված փաստերը և համահավաք մատենագիտական ցանկերի տվյալները՝ ընդգծենք, որ «Մասուն» տպարանից մեզ առայժմ հայտնի է 8 անուն գիրք և 8 անուն պարբերական: «Գաւառ» պարբերականում տպագրված հայտարարության մեջ նշված է, որ տպարանում ընդունվել են նաև ցուցանակների, այցետոմսերի, այլ տպագրությունների, կազմերի, շրջանակների պատվերներ (Մասուն 1910, 4): Նմանատիպ մի ձևակերպում կա նաև Ա. Բակունցի «Կյոբես» ստեղծագործության մեջ. «Տպում էին հարսանյաց հրավերներ, գավառային վարչության բլանկներ և զանազան պուրլիկացիաներ տուրքի, քոչի և զինվորակոչության մասին» (Բակունց 1982, 420): Սակայն մեր որոնումները նմանատիպ տպագրություններ գտնելու ուղղությամբ հաջողությամբ չեն պսակվել:

Գնահատելով տպարանի գործունեությունը տպագրության պատմության տեսանկյունից՝ նշենք, որ ըստ մեզ հասած հայտնի և հասանելի տվյալների՝ այնքան էլ արգասաբեր չի եղել քանակի առումով: Հատկապես գրքերի տպագրության թվականները բավական ընդհատումներ ունեն: Օրինակ՝ 1909, 1910, 1912, 1916 թթ. մեզ հասել է մեկական գիրք, 1921 թ.՝ 3 գիրք: Նշված տարեթվերի միջակայքում տպագրված որևէ գիրք ներկա դրությամբ մեզ հայտնի չէ: Այսպիսի տվյալ ամրագրված չէ նաև մեզ հասանելի մատենագիտական աղբյուրներում: Պատճառները կարող են շատ տարբեր լինել՝ սկսած քաղաքական, հասարակական գործունեից մինչև ֆինանսական խնդիրներ: Մի բան պարզ է, որ տպարանի գործունեության համար այս թվաքանակը պարզապես քիչ է և մի փոքր էլ անտրամաբանական, քանի որ նման գործունեությունը պետք է որ ֆինանսական խնդիրների առաջ կանգնեցներ տպարանի պատասխանատուներին:

Կա նաև խնդրի մյուս կողմը՝ միգուցե տպագրված գրքերի կամ նյութերի մի մասը չի պահպանվել կամ գոնե հայտնի չէ մատենագետներին և ուսումնասիրողներին: Այս վարկածը շրջանառելի է, քանի որ ներկայումս կատարվող մատենագիտական հետազոտությունները փաստում են, որ հայտնաբերվում են նոր անուններ, որոնք առ այսօր չեն արտացոլվել մատենագիտական ցանկերում (Պետոյան, Ալեքսանյան 2018, 127):

Պարբերականների պարագայում խնդիրը մի փոքր այլ է: Մեզ հասած անուններից շատերը պահպանվել են միայն մատենագիտական աղբյուրներում, իսկ կոնկրետ առանձին համարները մեզ չեն հասել: Հուսանք, որ առաջիկայում Սյունիքի տպագրական օջախի պատմությունն այս առումով կհարստանա:

Բոլոր գրքերի վրա արձանագրված է տպարանի անունը «Մասուն», բացառությամբ 1922 թ. տպագրված Մ. Թավալաքյանի «Ազատագրած Ջանգեզուր» գրքի, որի վրա տպարանի անունը չի նշված: Սակայն թե՛ նախորդ հետազոտություններում, թե՛ մեր հետազոտությամբ վստահաբար պնդում ենք, որ այս գիրքը տպագրվել է հենց «Մասուն» տպարանում՝ հետևյալ պատճառներով.

Ա) Նախ այդ շրջանում Սյունիքում այլ տպարան չի գործել: Քաղաքական այդ բարդ ժամանակահատվածում, երբ Սյունիքը պարբերաբար հայտնվում էր երկու հակառակորդ քաղաքական ուժերի իշխանության ներքո, դժվար հնարավոր լինելու հատկացնել լրացուցիչ ուժեր կամ ֆինանսներ նոր տպարանի կամ նոր

տպագրական սարքավորումների ձեռքբերման համար: Արամ Բաբայանն իր ուսումնասիրության մեջ նշում է. «Հայտնի է, որ անցյալից սովետական իշխանությունը ժառանգություն ստացավ մի երկու – երեք աղքատիկ տպարան՝ իրենց հնամաշ մեքենաներով և տառերով» (Բաբայան 1963, 64): Համաձայնվելով, որ Ա. Բաբայանի գիրքն ունի սովետական կարգերի գովաբանման ընդգծված ուղղվածություն, այնուամենայնիվ այս նշումը փաստում է, որ գոնե սկզբնական շրջանում խորհրդային իշխանությունը յուրացրել է ոչ միայն Գորիսի «Մասուն» տպարանի, այլև մնացած տպարանների գույքը: Իսկ երբ այս ամենին հավելում ենք Ս. Հախվերդյանի վկայությունը, թե «...Նրա [Մաստուր Գևորգյանի] բերած մեքենաներից մի քանիսը մինչև օրս ծառայում են Գորիսի և Կապանի տպարաններին» (Հախվերդյան 1996, 175), պատկերն ավելի ամբողջական է դառնում:

Բ) Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ «Մասուն» տպարանում տպագրված մի շարք պարբերականներ ևս չունեն տպարանի հիշատակում: Միայն «Գառառ» պարբերականն է վերջում նշել տպարանը, մյուսների պարագայում այդպես չէ: Գ) Լևոնյանը միայն «Որոտան» պարբերականի համար է նշել տպարանի անունը, իսկ մնացյալի դեպքում նման տվյալ չի արձանագրել: Առաջնորդվելով նախորդ կետով, այն է՝ այդ շրջանում Սյունիքում այլ տպարան չի գործել, միանշանակ վստահ ենք, որ բոլոր պարբերականները տպագրվել են հենց այս տպարանում:

Ըստ «Ղարաբաղ» թերթի թղթակցության (Սազանդարյան 1912, 3) «Մասուն» տպարանում տպագրվել են հայերեն, ռուսերեն, թուրքերեն գրքեր, սակայն առ այսօր մեզ հայտնի են միայն հայերեն տպագրություններ՝ գրքեր և պարբերականներ: «Գառառ» պարբերականի մեջ, իհարկե, կան առանձին ռուսերեն բառեր կամ հատվածներ, ինչը վկայում է, որ տպարանն ունեցել է ռուսերեն տառատեսակներ, սակայն առանձին ռուսերեն հրատարակություններ դեռ չենք գտել: «Գառառ» պարբերականի հունվարյան համարներից մեկում առաջարկություն է արվում թերթին տպել նաև թուրքերեն հոդվածներ՝ նախատեսված տեղի թուրք ազգաբնակչության համար, ինչին ի պատասխան խմբագրությունը գրում է, որ թուրքերեն տպագրությունը դեռ ուժերից վեր է և կախված է նրանից, թե թերթը ինչ ընդունելություն կունենա, որից էլ կախված է տպագրության ֆինանսական կողմը (Թուրքական կյանք 1910, 1): Իսկ նույն թերթի մեկ այլ համարում առաջարկվում է տպել հայատառ թուրքերեն (Գառառասէր 1910, 1–2): Այս հարցուպատասխանից կարելի է ենթադրել, որ 1909–1910 թթ. տպարանը չի ունեցել թուրքերեն տառատեսակներ, որոնց ձեռքբերումը նաև ֆինանսական ծանրություն էր նրա համար: Սակայն քանի որ պահպանված են թուրքերեն տպագրության մասին վկայություններ, կարելի է նաև ենթադրել, որ տառատեսակները եղել են, սակայն թուրքերեն տպագրություն չի իրականացվել: Հնարավոր է՝ տպվել են միայն առանձին այցետումներ, հրավիրատուներ, որոնք, ցավոք, մեզ չեն հասել: Կարող ենք միայն հուսալ, որ հետագա որոնողական աշխատանքների ընթացքում կհայտնաբերվեն նաև նմանատիպ հրատարակություններ:

«Մասուն» տպարանում տպագրված գրքերի բովանդակությունը տարբեր է և կրում է նաև ժամանակաշրջանի քաղաքական, ազգային-ազատագրական պայ-

քարի կնիքը: Տպագրված գրքերը փոքրածավալ են, տպագրական արվեստի տեսանկյունից ոչ այնքան բարձրարժեք, վաճառվել են բավական ցածր գնով ինչպես Գորիսում, այնպես էլ այլ վայրերում (Սուքիասյան 2019, 44): Գրքերի բովանդակային, տպագրական առանձնահատկությունները մանրամասն ներկայացված են պատմաբան Հ.Սուքիասյանի արդեն նշված ուսումնասիրության մեջ:

«Մասուն» տպարանում տպագրված պարբերականներից առաջինը «Գաւառ»-ն է՝ Ս.Տեր-Մինասյանի խմբագրությամբ: Լույս է տեսել 1909–1910 թթ.: Եղել է Սյունիքի տարածաշրջանի առաջին պարբերականը՝ նախատեսված տեղի հայ հասարակության համար: Պարբերականի մասին Գ.Ստեփանյանի ծավալուն ուսումնասիրությունը տալիս է բոլոր հարցերի պատասխանները (Ստեփանյան 2020, 323: Խառատյան, Գևորգյան 2017, 64–68): Նշենք միայն, որ հասկանալի պատճառներով գաւառական թերթերը չէին կարող ունենալ սպառման այն շրջանակը, ինչ քաղաքային պարբերականները, սակայն գավառական նման պարբերականների ի հայտ գալը հնարավորություն էր տալիս ներկայացնել տեղի հասարակության խնդիրները, առօրյան, ծրագրերը, ինչը շատ քիչ էր արվում քաղաքային մամուլում: Պարբերականն անդրադարձել է Գորիսի, նաև Սյունիքի ու Արցախի տարածաշրջանների մյուս բնակավայրերին, հասարակության տարբեր խնդիրներին, բայց կոնկրետ «Մասուն» տպարանի մասին, որքան էլ զարմանալի է, կան կցկտուր տեղեկություններ: 1910 թ. առաջին, ինչպես նաև վերջին մի քանի համարներում թերթում տպագրվում է «Մասուն» տպարանի մասին հայտարարությունը. «Մասուն»: Տպարան և գրաւաճառանոց, դասական պիտոյքների մագազին և կազմարարական արհեստանոց (Մասուն 1910, 4):

Թերթի տպագրությունն ընդհատելու վերաբերյալ նախապես թերթում որևէ հայտարարություն չի տպագրվել, սակայն վերջին համարներում նշվում է, որ պակասել են բաժանորդները (Մի ցայտուն գիծ 1910, 1), առկա են ֆինանսական խնդիրներ, խստացել է գրաքննությունը: Բացի դրանից, համեմատությունից ակնհայտ է, որ խախտված է վերջին համարների հրատարակության պարբերականությունը, ինչը վկայում է դժվարությունների մասին: Հրատարակությունը դադարեցնելու պատճառ կարող էր լինել նաև այն, որ խմբագիր Սիմոն Տեր-Մինասյանը նշանակվել է Զանգեզուրի ծխական դպրոցների վերահսկող: Հավանաբար սա նպաստել է թերթի տպագրությունը դադարեցնելուն (Լրատու 1910ա, 4):

Նույն տպարանում տպագրված «Որոտան» (1918 թ.), «Մինիք» (1918 թ.), «Զանգեզուրի կոմունիստ» (1920 թ.), «Կարմիր Զանգեզուր» (1920 թ.), «Ազատ Մինիք» (1921 թ.) պարբերականների մասին տվյալները պահպանվել են Գ.Լևոնյանի կազմած մատենագիտության մեջ, որից էլ հետագայում օգտվել են հայ պարբերական մամուլի համահավաք մատենագիտական ցանկերը կազմողները: «Խորհրդային Զանգեզուր» (1921 թ.) պարբերականից մեզ է հասել միայն 8-րդ համարը, իսկ մնացյալ համարների ճակատագիրն անհայտ է: Վերջին «Կարմիր ռաշպար» պարբերականը շարունակել է «Խորհրդային Զանգեզուր» թերթին: Տպագրությունն, ըստ Գ.Լևոնյանի սկսվել է 1921 թվականից (Լևոնյան 1934, 180), իսկ ըստ «Հայ պարբերական մամուլի մատենագիտության»՝ 1922 թ., սակայն երկու դեպքում էլ պահպանվել են միայն մատենագիտական աղբյուրները: Մեզ հասանելի

համարները սկսվում է 1923 թվականից և շարունակվում են մինչև 1930 թ.: Զուգահեռ ունեցել է հավելվածներ՝ «Գեղջկուհու էջը», «Երիտասարդ ռաշպար», որոնք որոշ մատենագիտական աղբյուրներում համարվել են առանձին հրատարակություններ:

Քաջատեղյակ լինելով, որ տվյալ ժամանակահատվածում գրաքննությունը չէր կարող անտեսել «Մասուն» տպարանի գործունեությունը, փորձեցինք պարզել, թե տպարանն ինչպես է հաղթահարել գրաքննության խնդիրը: Մակայն տպարանի վերաբերյալ արխիվային փաստեր ներկա պահին մեզ չհաջողվեց գտնել: Ավելին, կարծում ենք այս խնդիրը առանձին ուսումնասիրության նյութ կդառնա հետագայում: Միայն հպանցիկ մի քանի նյութերից կարող ենք ենթադրել, որ տպարանին ևս ներկայացվել են գրաքննությանը ենթարկվելու պահանջներ: «Գաւառ» թերթի հուլիսի համարներից մեկում նշվում է, որ Գանձակի նահանգապետը իր նոր կարգադրությամբ պարտավորեցրել է խմբագրությանն իր միջոցներով ընտրել տեղի ծառայողներից գրաքննիչ, մինչդեռ դա հավելյալ ծախս էր թերթի համար: Այդ պատճառով խմբագիրը որոշում է դիմել վերին աստիճաններին՝ կարգադրությունը չեղարկելու համար (Լրատու 1910թ, 4): Հաւանաբար նա հաջողություն չի ունենում, քանի որ օգոստոսի համարներից մեկում նշվում է, որ թերթի խմբագրությունից նորից նահանգապետը պահանջել է անկախ գրաքննիչ նշանակել, և թերթի խմբագրությունը պետք է կամովի համաձայնության գա (Լրատու 1910թ, 3): Չնայած նույն հաղորդման մեջ շեշտվում է, որ սա դեռ թերթը փակելու հրահանգ չէ, այլ կամովի համաձայնության գալու առաջարկ, կարծում ենք՝ սա թերթի տպագրությունը դադարեցնելու պատճառներից մեկն է: Վերը նշված փոքրիկ հաղորդումներից կարող ենք ենթադրել, որ համանման հրահանգ-պահանջներ ներկայացվել են նաև «Մասուն» տպարանի հիմնադիրներին, սակայն այդ պահանջների լուծման վերաբերյալ որևէ կոնկրետ տեղեկություն չենք գտել:

Սյունիքի հայկական տպագրության պատմությունը 1922 թվականից հետո գոնե մինչև դարակես անկում է ապրում: Փակվելուց հետո վստահաբար «Մասուն» տպարանի գույքը և սարքավորումները պետականացվում են՝ դրանց հիման վրա ստեղծելով այլ տպարաններ, որոնք գործում են Զանգեզուրի տարածաշրջանի հեղկոմի, Գավգործկոմի նյութերը տպագրելու համար: Չնայած «Գորիսի հանրագիտարանի» հեղինակները պնդում են, որ Գորիսի տպարանը գործել է մինչև 1996 թ. (փակվել է սեփականաշնորհումից հետո) և կատարել է Գորիսի և Զանգեզուրի այլ բնակավայրերի պատվերները (Զոհրաբյան, Միրզոյան 2008, 117, 373), այնուամենայնիվ 1922–1950 թթ. Գորիսում որևէ գիրք չի տպագրվել: Այդ են վկայում նաև հայ գրքի մատենագիտական համահավաք ցանկերը: 1931–1940 թթ. Սյունիքում տպագրվել է երեք գրքույկ՝ մեկը Մեղրիում՝ «Պարտադիր ագրոկանոններ հաստատված է ՀԽՍՀ Մեղրու շրջգործկոմի 1938 թվի մարտի 20-ի նիստում», երկուսը՝ Ղափանում՝ «Պարտադիր որոշում Ղափանի շրջգործկոմի: Պարտադիր գոռանասնաբուժական կանոններ», «ԽՍՀՄ-ի հողժողկոմատի և կոլտնտեսկենտրոնի որոշումը կոլտնտեսությունների 1931 թվի եկամուտների մասին»: Դրանից հետո տպագրված որևէ գրքույկ հայտնի չէ: Երեք գրքույկները անասնապահության, կոլտնտեսության կանոններ են: Մեկը տպագրվել է ԵՊՀ հրատարակչու-

թյան Մեղրիի տպարանում, մյուսը՝ Ղափանի շրջգործկոմի տպարանում, իսկ վերջինի տպարանը հայտնի չէ: Տպագրական արվեստի տեսակետից երեքն էլ արժեք չեն ներկայացնում:

Պարբերական մամուլի տպագրությունը ևս աշխարհագրական նոր սահմաններ է ընդգրկում (Զոհրաբյան, Միրզոյան 2008, 117, 117): 1922 թվականից հետո մինչև 20-րդ դարի կեսը տպագրվում են՝ Գորիսում երկու («Կարմիր զանգեզուր» (1934–1938 թթ.), «Ստալինյան դրոշով» (1935–1956 թթ.), Սիսիանում՝ երկու («Սիսիանի հարվածային» (1933–1939 թթ.), «Կոմունիզմի ուղեգիր» (1940–1962 թթ.), Կապանում (Ղափան)՝ երեք («Պայքար պղնձի համար» (1930–1935 թթ.), «Պղնձի համար» (1936–1979 թթ.), «Քաջարան» (1950–1957 թթ.), Մեղրիում՝ երկու («Կարմիր ուղի» (1923 թ.), «Կոլխոզային գյուղ» (1935–1962 թթ.) պարբերականներ:

Անփոփոխվել՝ նշենք հետևյալը. 20-րդ դարի առաջին կեսի բարդ քաղաքական պայմաններում Սյունիքի հայկական տպագրության սկզբնավորումը երևույթ էր հայ իրականության մեջ: Այն հայ տպագրության պատմությունն ամբողջացնող օղակներից մեկն է: Մատենագիտական ցանկերը տվյալներ են հաղորդում Սյունիքի առաջին տպարանի սահմանափակ տպագրությունների մասին, սակայն քանի որ այս տպագրական օջախը քիչ է ուսումնասիրված, լիահույս ենք, որ ի հայտ են գալու նոր անուններ: Սյունիքի հայկական տպագրությունը սկզբնավորվում է 1908 թ.: Քանի դեռ չեն հայտնաբերվել այլ տպագրություններ, այս տարեթիվը մնում է անփոփոխ: Ներկա պահին մեզ հասած տվյալների համաձայն մինչև 1922 թ. Սյունիքում տպագրվել են միայն գրքեր և պարբերականներ: Մանր տպագրությունների մասին տեղեկությունը մնում է չուսաքանված, քանի դեռ հասանելի չեն այլ մատենագիտական աղբյուրներ կամ կոնկրետ տպագրություններ: Հայտնի են միայն հայերեն տպագրություններ: Ռուսերեն տպագրություններ վատահ ենք, որ եղել են, քանի որ տպարանն ունեցել է ռուսերեն տառատեսակներ, իսկ թուրքերեն տպագրությունների փաստը առայժմ կասկածելի է, քանի դեռ չեն գտնվել նմանատիպ հրատարակություններ: Սյունիքի տպագրության պատմությունը 1922–1950 թթ. արդյունավետ ու նպատակային չի եղել, ավելի շատ տպարանները ծառայել են խորհրդային իշխանության գաղափարախոսությունը տարածելու համար: Սյունիքը՝ որպես տպագրավայր, դեռ կարիք ունի մանրակրկիտ հետազոտման, ինչին կնպաստեն տարբեր անհատների մոտ կամ տարբեր արխիվներում պահպանված նյութերի հրապարակումները:

ՕԳՏԱԳՈՐԾԿԱԾ ՍԿՉԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պարբերական մամուլ

- ԳԱԻԱՌԱՍԵՐ 1910–Գառառաւէր, Գործակցութիւնն է մօտեցնում, «Գառառ» թերթ, Գորիս, 1910, N 7, էջ 1–2:
- ԶԵՓՅՈՒՌ 1911–Զեփիւռ Լ., Զանգեզուրի իրականութիւնից, «Ղարաբաղ» թերթ, Շուշի, 1911, N 1, էջ 3:
- ԹՈՒՐԲԱԿԱՆ ԿՅԱՆՔ 2010–Թուրքական կեանք, «Գառառ», Գորիս, 1910, N 3, էջ 1:
- ԼՐԱՏՈՒ 1910Ա–Լրատու, «Գառառ» թերթ, Գորիս, 1910, N 34, էջ 4:
- ԼՐԱՏՈՒ 1910Բ–Լրատու, «Գառառ» թերթ, Գորիս, 1910, N 28, էջ 4:

- ԼՐԱՏՈՒ 1910Գ–Լրատու, «Գաւառ» թերթ, Գորիս, 1910, N 32, էջ 4:
 ՄԻ ՑԱՅՏՈՒՆ ԳԻԾ 1910–Մի ցայտուն գիծ, «Գաւառ» թերթ, Գորիս, 1910, N 34, էջ 1–2:
 ՍԱՍՈՒՆ 1910–Սասուն տպարան, «Գաւառ» թերթ, Գորիս, 1910, N 1, էջ 4:
 ՍԱԶԱՆ-ԴԱՐԵԱՆ 1912–Սազանդարեան Տ, Գորիս, «Ղարաբաղ» թերթ, Շուշի, N 8, 1912, էջ 3:
 ՄԵԼ.-ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ 1911–Մել.-Ղարագետեան Գ., Նամակ Ղափանից, «Ղարաբաղ» թերթ, Շուշի, 1911, N 5, էջ 3:

Գրականություն

- ԲԱԲԱՅԱՆ 1963–Բաբայան Ա., Հայ գիրքը և տպագրությունը, Երևան, 1963:
 ԲԱՎՈՒՆՑ 1982–Բակունց Ա., Երկերի ժողովածու, Հ. III, Երևան, 1982:
 ԳՐԻԳՈՐՅԱՆ 2015–Գրիգորյան Մ., Հայ գիրքը պատմության քառուղիներում (Համառոտ ակնարկ), «Բանբեր Հայաստանի գրադարանների», N 1, Երևան, 2015, էջ 55–64:
 ԶՈՀՐԱԲՅԱՆ, ՄԻՐԶՈՅԱՆ 2008–Զոհրաբյան Է., Միրզոյան Հ., Գորիսի հանրագիտարան, Երևան, 2008:
 ԶՈՀՐԱԲՅԱՆ 2007–Զոհրաբյան Է., Լեռնային լեզենդ, Երևան, 2007:
 ԹԵՌՈՒԻԿ 1912–Թէրողիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912:
 ԻՇԽԱՆՅԱՆ 1981–Իշխանյան Ռ., Հայ գիրքը 1512–1920, Երևան, 1981:
 ԼԱԼԱՅԱՆ 1899–Լալայեան Ե., Զանգեզուրի գաւառ (Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Հ. Բ), Թիֆլիս, 1899:
 ԼԵՎՈՆՅԱՆ 1934–Լևոնյան Գ., Հայ պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794–1934), Երևան, 1934:
 ԽԱՌԱՏՅԱՆ, ԳԵՎՈՐԳՅԱՆ 2017–Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922, Հ. 2, Խմբ.՝ Ա. Խառատյան, Լ. Գևորգյան, Երևան, 2017:
 ՀԱԽՎԵՐԴՅԱՆ 1996–Հախվերդյան Ս., Գորիսի պատմություն, Գորիս, 1996:
 ՀԱԽՎԵՐԴՅԱՆ 2005–Հախվերդյան Ս., Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005:
 ՊԵՏՈՅԱՆ, ԱԼԵԿՍԱՆՅԱՆ 2018–Նորահայտ գրքեր և պարբերականներ: «Հայ գիրք» և «Հայ պարբերական մամուլ» համահավաք մատենագիտական ցանկերում չնեքառված հրատարակություններ, պրակ Ա., կազմ.՝ Ս. Պետոյան, Ռ. Առաքելյան, Խմբ.՝ Տ. Զարգարյան, Հ. Ղազարյան, Մ. Գրիգորյան, Երևան, 2018:
 ՄՄԲԱՅՅԱՆ 2017–Մմբատյան Գ., Մյունիքը փորձության մեջ. Հայ-թաթարական բախումները, Երևան, 2017:
 ՄՏԵՓԱՆՅԱՆ 2020–Ստեփանյան Գ., Սիմեոն Տէր-Մինասյանի «Գաւառ» շաբաթաթերթը, Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում. ընտանիք, հայրենիք, եկեղեցի: Ազդարար 225: Նյութեր հայ մամուլի 225-ամյակին նվիրված գիտաժողովի (28–29 նոյեմբերի 2019 թ.), Երևան, 2020, էջ 323–339:
 ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2019–Սուքիասյան Հ., Գորիսի «Սասուն» տպարանի գրահրատարակչական գործունեությունը, Մյունիքը կրթության և մշակույթի օջախ: Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2019, էջ 35–44:
 ЗОРАБЯН 2005–Зорабян Э., Вес Сюник, Том III, Москва, 2005:

Maya Grigoryan
Ph. D in Philology

"Vatche and Tamar Manoukian" Matenadaran of Mother See of Holy Etchmiadzin
grigoryan_maya@mail.ru

THE DEVELOPMENT PROCESS OF ARMENIAN PRINTING IN SYUNIK IN THE FIRST HALF OF THE 20TH CENTURY

Keywords: Syunik, Goris, Kafan, history of Armenian printing, printing house, books, periodicals.

In the difficult political conditions of the first half of the 20th century, the beginning of the Armenian printing in Syunik was a phenomenon in the Armenian reality. It is one of the links that completes the history of Armenian printing. Bibliographic lists provide information on the limited editions of the first printing house in Syunik, but since this printing house is little studied, we are hopeful that new names will emerge.

The beginning of the Armenian printing of Syunik dates back to 1908. This date remains unchanged as no earlier publications are found. According to our most recent data, only books and periodicals were published in Syunik until 1922. Only Armenian publications are known. We are sure that there were Russian prints, as the printing house had Russian fonts, and the existence of Turkish prints is currently doubtful until such publications are found. The history of Syunik printing in 1922–1950 was not effective and purposeful, as the printing houses rather served the purpose of spreading the ideology of the Soviet power. Syunik, as a printing house, still needs to be thoroughly researched, which will be facilitated by the publication of materials stored by different individuals or in different archives.

Майя Григорян
Кандидат филологических наук

Матенадаран “Ваче и Тамар Манукян” Первопрестольного Святого Эчмиадзина
grigoryan_maya@mail.ru

ПРОЦЕСС РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ПЕЧАТИ В СЮНИКЕ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ XX ВЕКА

Ключевые слова: Сюник, Горис, Кафан, история армянского книгопечатания, типография, книги, периодические издания.

В сложных политических условиях первой половины 20-го века начало армянского книгопечатания в Сюнике было явлением армянской действительности. Это одно из звеньев, завершающих историю армянского книгопечатания. Библиографические списки содержат информацию об ограниченных тиражах первой типографии в Сюнике, но поскольку эта типография мало изучена, мы полны надежды, что появятся новые имена.

Армянская печать Сюника берёт начало с 1908 г. Эта дата остается неизменной до тех пор, пока не будут найдены другие публикации. По данным, дошедшим до нас в настоящий момент, до 1922 года в Сюнике печатались только книги и периодические издания. Информация о мелких печатных изданиях остается неизвестной до тех пор, пока не станут доступны другие библиографические источники или конкретные издания. Известны только армянские издания. Мы уверены, что русские печати были, так как в типографии стояли русские шрифты, а факт турецких печатей до сих пор вызывает сомнения, пока такие издания не будут найдены. История книгопечатания в Сюнике не была эффективной и целенаправленной в 1922–1950 гг., большая часть типографий служила распространению идеологии советской власти. Сюник, как центр типографии, еще нуждается в тщательном изучении, чему будет способствовать публикация материалов, хранящихся у разных лиц или в разных архивах.